# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Վարդենուտ համայնք , 1փ 35, 093-66-33-45, vardenut.aragatsotn@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» հունվարի 2017 թվականի N 1

Դավիթ Ջիվանի Մովսիսյանի սեփականություն հանդիսացող 02-102-0114-0032 ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,1 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով.

***Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Դավիթ Մովսիսյանի սեփականություն հանդիսացող 02-102-0114-0032 ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,1 հա հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել և դասել բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի դասին:
2. Խնդրել ՀՀ Արագածոտնի մարզպետին նախաձեռնելու քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման օրենքով սահմանված գործընթացը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավագանու անդամներ

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Վարդենուտ համայնք , 1փ 35, 093-66-33-45, vardenut.aragatsotn@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» հունվարի 2017 թվականի N 2

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-102-0116-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 0,5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով.
***Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 02-102-0116-0029 ծածկագրում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,5 հա հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի փոփոխելու համար:
2. Խնդրել ՀՀ Արագածոտնի մարզպետին նախաձեռնելու քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակության փոփոխման օրենքով սահմանված գործընթացը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավագանու անդամներ

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ*

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017թ. թիվ 3 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017 Թ. ԲՅՈՒՋԵՅԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի 5-րդ ենթակետի և <<բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման Հնգամյա ծրագիրը և խորհրդակցական մարմնի կողմից իրականացված հանրային լսումների արդյունքները

**Վարդենուտ համայնքի ավագանին որոշեց.**

Հաստատել Վարդենուտի համայնքապետարանի 2017թ. բյուջեն համաձայն հավելված 1-ի :

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1
Վ[illegible] ավագանու
[illegible] 2017թ. [illegible] որոշման
[illegible]ամով/

## Բյուջեի եկամտային մաս

- Հողի հարկ-3100,0
- Գույքահարկ-1435.5

  ա/ Շենքերի և շինությունների-110.0

  բ/փոխադրամիջոցների-1325,5

- Տեղական տուրքեր-332.0

ա/ Ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար-132.0

բ/ Հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար-200.0

- 2017թ. Լրավճար-16062,5
- Հողի վարձավճար-600,0
- Այլ եկամուտներ-540,0

Ընդամենը՝-22070,0

- Պահուստային ֆոնդ-1100,0
- Մնացորդ առ 01.01.2017թ. դրությամբ-1044,9

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

- Աշխատավարձ-13295,0
- Պարգևատրում-1086,0
- Բանկային գործունեություն-60,0
- Էլեկտրաէներգիայի վարձ-180,0
- Կապի ծառայություն-250,0
- Գործուղումներ-170,0
- Համակարգչային ծառայություններ-140,0
- Տեղեկատվական ծառայություններ-200,0
- Ներկայացուցչական ծախսեր-250,0

- Գրասենյակային նյութեր-280,0
- Հատուկ նպատակային նյութեր-300,0
- Դրամաշնորհներ-80,0
- Մասնագիտական ծառայություններ-80,0
- Կառավարչական ծառայություն (աուդիտ)-600,0
- Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին-60,0

Ընդամենը՝ 17031,0

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

- Վառելիքի ծախս-950,0
- Տրանսպորտային նյութեր-815,0
- Շենքերի ընթացիկ նորոգում և պահպանում (4251)-414,0
- Մեքենա-մեխանիզմների նորոգում (4252)-250,0
- Շենքերի և շինությունների կառուցում (ջրամատակարարում)(5113)-2144,9
- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ-700,0
- Պարտադիր վճարներ-110,0

Ընդամենը՝ 5383,9

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Սոցիալական օգնություն 700,0

Ընդամենը 700,0

Վարդենուտ համայնքի ղեկավար Գ. Սահակյան Գ. Սահակյան

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ*

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017թ. թիվ 4որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտ համայնքի ղեկավարի 2017թ. ամսական պաշտոնային դրույքաչափը,այն սահմանել 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) դրամ:

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ. Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017թ. թիվ 5 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017Թ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտի համայնքապետարանի աշխատակազմի 2017թ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի.

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 2

Վարդենուտ համայնքի ավագանու

10.01.2017թ. թիվ 5 որոշման

Վարդենուտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1.Աշխատակիցների թվաքանակը-9
2,Պաշտոնային դրույքաչափը-9

| Հ/հ | Հաստիքի անվանումը | 2017թ. | |
|---|---|---|---|
| | | Միավորը | Մեկ միավորի դրույքը |
| | | Համայնքապետարանի աշխատակազմ | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 240,000 |
| | Ընդամենը | 1 | 240,000 |
| | | Համայնքային ծառայության պաշտոններ | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 160000 |
| 3 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 130.000 |
| 4 | Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 130.000 |
| 5 | Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 130,000 |
| | Ընդամենը | 4 | 550.000 |
| | | Տեխնիկական սպասարկող անձնակազմ | |
| 6 | Ակումբի վարիչ | 1 | 72752 |
| 7 | Գրադարանավար | 1 | 72752 |
| 8 | Հավաքարար պահակ | 1 | 77905 |
| 9 | Տրակտորիստ- բուլդուզերավար | 1 | 72752 |
| | Ընդամենը | 4 | 296,161 |
| | Ընդամենը համայնքում | 9 | 1.086.161 |

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԻՍԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

### ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017թ. թիվ 6 որոշում

### ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով.
**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Վարդենուտ համայնքի տարածքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելված 3-ի.

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 3

Հավելված 3
ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենուտ
համայնքի ավագանու
2017 թ. հունվարի [illegible] N 6 որոշման

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝**

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ;

**բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

**գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝**

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հինգ հազար դրամ.

3. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**ա)** ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար յոթ հարյուր հիսուն դրամ:

**բ)** ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար յոթ հարյուր հիսուն դրամ:

**4.** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

**5.**համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվարի 2017թ. թիվ 7 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով գույքագրման հանձնաժողովի եզրակացությունը.

Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վարդենուտի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը՝ համաձայն հավելված 4-ի

Ավագանու 5 անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը:

Կողմ 5 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Լ.Տերոյան
4. Է.Խալաթյան
5. Ռ.Հարությունյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 4
Վարդենիս համայնքի ավագանու
2017 թ. հունվարի 10-ի N7 որոշման

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

| N | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐԸ | ՔԱՆԱԿԸ | ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄՈՎ |
|---|---|---|---|---|
| 1 | Բաղնիք 12 տեղանոց | հատ | 1 | 351,1 |
| 2 | Տրակտոր-բուլդուզեր DT42 | հատ | 1 | 398,2 |
| 3 | Տրակտոր էքսկավատոր ЮМЗ | հատ | 1 | 444,2 |
| 4 | Կասսա երկաթյա | հատ | 2 | 7,3 |
| 5 | Տակդիր փայտյա | հատ | 1 | 3,3 |
| 6 | Գրասեղան աշխատանքային | հատ | 2 | 30,4 |
| 7 | Համակարգիչ, պենտյում-3 | հատ | 1 | 134,1 |
| 8 | Մոնիտոր | հատ | 1 | 62,1 |
| 9 | Տպիչ /պրինտեր/ | հատ | 1 | 55,0 |
| 10 | Ստեղնաշար, մկնիկ | հատ | 2 | 9,4 |
| 11 | Համակրգչի սեղան | հատ | 2 | 76,0 |
| 12 | Համակարգիչ | հատ | 2 | 643,0 |
| 13 | Մոնիտոր | հատ | 2 | 116,1 |
| 14 | Սկաներ | հատ | 1 | 32,8 |
| 15 | Business | հատ | 1 | 95,1 |
| 16 | Ալեքարտ համակրգչի-1-ի համար | հատ | 1 | 3,6 |
| 17 | Էլ. էներգիայի անխափան սնուցման սարք | հատ | 2 | 92,6 |
| 18 | Կոնցենտրատոր, մալուխ, հոս.լար, USB | հատ |  | 29,6 |
| 19 | B68A-1C73 համարի երթուղիչ սարք | հատ | 1 | 114,0 |

## ԳՐԱԴԱՐԱՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Գրքեր խառը | կտոր | 7581 | 837.3 |
| 2 | Գրասեղան | հատ | 3 | 13,8 |
| 3 | Աթոռ անհատական | հատ | 2 | 2,2 |
| 4 | Գրադարակներ երկաթյա | հատ | 25 | 56,2 |
| 5 | Կատալոգների պահարան | հատ | 1 | 1,2 |
| 6 | Քարտարկղ | կտոր | 1 | 1,1 |
| 7 | Ցուցափեղկ | հատ | 2 | 3,3 |

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՏՈՒՆ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Բեմի յուղաներկ նկար | հատ | 1 | 24,7 |
| 2 | Բեմի վարագույր | հատ | 1 | 42,2 |
| 3 | Ֆոյեի յուղաներկ նկար | հատ | 1 | 32,3 |
| 4 | Դաշնամուր <<poern>> | հատ | 1 | 34,8 |
| 5 | Պատի ստենդներ | հատ | 6 | 9,1 |
| 6 | Դահլիճի լուսամուտի վարագույր | հատ | 10 | 16,4 |
| 7 | Բեմի վարագույր նկարով | հատ | 2 | 20,1 |
| 8 | Կիսավարագույր | հատ | 7 | 6,7 |
| 9 | Բարձր լարման շիթ | հատ | 1 | 30,4 |
| 10 | Կուլտուրայի տան շենք | հատ | 1 | 11483,4 |

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2017թ. թիվ 8 որոշում
ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է.**

1.Հավանություն տալ Վարդենուտ համայնքի ղեկավարի հաշվետու տարվա ընթացքում կատարած աշխատանքներին:

2.Հաշվետու տարում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

3.Հաստատել Վարդենուտ համայնքի 2016 թվականի ֆինանսատնտեսական բյուջեի տարեկան եկամտային և ծախսային մասերի կատարումը, համաձայն հավելված 5-ի և հավելված 6-ի:

Ավագանու հինգ անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը

Կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Է.Խալաթյան
4. Ռ.Հարությունյան
5. Լ.Տերոյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 5
Վարդենուտի համայնքի ավագանու
27.02.2017թ. N8 որոշման

Բյուջեի եկամտային մաս առ 01.01.2017թ.

| N | Հարկատեսակները | Տարեկան պլանը /հազ. դրամ/ | Կատարողականը | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական նշանակության հողի հարկ | 3100,0 | 3100,2 | 100,1 |
| 2 | Գույքահարկ | 1410,5 | 1433,0 | 101,5 |
| 3 | Տեղական տուրքեր | 246,0 | 192,0 | 78,1 |
| 4 | Հողի վարձավճար | 600,0 | 509,3 | 84,9 |
| 5 | Ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցում | 16062,5 | 16062,5 | 100 |
| 6 | Այլ լրավճար | 277,0 | 277,0 | 100 |
| 7 | Այլ եկամուտներ | - | 861,1 | - |
| 7 | Ընդամենը | 21696,0 | 22435,1 | 103,4 |

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Վարդենուտ համայնքի ավագանու
27.02.2017թ. N8 որոշման

Վարդենուտ համայնքի 2016թ. բյուջետային ծախսերի կատարողականը առ
01.01.2017թ. դրությամբ

## 1.Վարչական բյուջեի ծախսեր

| N | Ծախսերի տեսակները | Պլան /հազ. դրամ/ | Կատարողական /հազ. դրամ/ | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 13013,6 | 12540,3 | 96,4 |
| 2 | Պարգևատրումներ | 1031,0 | 1031,0 | 100 |
| 3 | Բանկային և գործառնական | 60,0 | 60,0 | 100 |
| 4 | Էլեկտրաէներգիայի | 200,0 | 90,0 | 45,0 |
| 5 | Կապի ծառայություն | 250,0 | 196,0 | 78,4 |
| 6 | Ներքին Գործուղումներ | 175,0 | 170,5 | 97,4 |
| 7 | Համակարգչային ծառայություններ | 200,0 | 136,8 | 68,4 |
| 8 | Տեղեկատվական ծառայություններ | 250,0 | 175,6 | 70,2 |
| 9 | Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր | 880,0 | 880,0 | 100 |
| 10 | Գրասենյակային նյութեր | 400,0 | 400,0 | 100 |
| 11 | Հատուկ նպատակային նյութեր | 425,0 | 425,0 | 100 |
| 12 | Մասնագիտական ծառայություններ | 141,5 | 122,2 | 86,4 |
| 13 | Ներկայացուցչական ծախսեր | 413,0 | 413,0 | 100 |
| 14 | Պարտադիր վճարներ | 107,0 | 89,0 | 80,4 |
| 15 | դրամաշնորհներ | 40,0 | - | - |
| 16 | Կառավարչական ծառայություն (աուդիտ) | 600,0 | 600,0 | 100 |
| 17 | Ապահովագրական ծախսեր | 100,0 | 40,0 | 40,0 |
|  | Ընդհամենը | 18286,1 | 17369,4 | 84,9 |

2.Ֆոնդային բյուջեի ծախսեր

| N | Ծախսերի տեսակները | Պլան /հազ. դրամ/ | Կատարողական /հազ. դրամ/ | Կատարման տոկոսը |
|---|---|---|---|---|
| 1 | Վառելիքի ծախսեր | 1579,4 | 1579,4 | 100 |
| 2 | Տրանսպորտային նյութեր | 916,0 | 916,0 | 100 |
| 3 | Շենքերի ընթացիկ նորոգում և պահպանում (4251) | 700,0 | - | - |
| 4 | Շենքերի և շինությունների կառուցում (5113) | 5068,1 | 5004,0 | 98,7 |
| | Մեքենա-մեխանիզմների նորոգում(4252) | 502,0 | 502,0 | 100 |
| 7 | Փողոցների լուսավորություն(5132) | 1000,0 | - | - |
| | Վարչական սարքավորումներ | 163,0 | 163,0 | 100 |
| | Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 154,5 | 144,5 | 93,5 |
| | Ընդամենը | 10083,0 | 8308,9 | 82,4 |
| | 3.Սոցիալական օգնություն | | | |
| 1 | Սոցիալական օգնություն | 780,0 | 780,0 | 100 |
| | ընդամենը | 780,0 | 780,0 | 100 |

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

# ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2017թ. թիվ 9 որոշում

## ՎԱՐԴԵՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2017Թ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

**Վարդենուտ համայնքի ավգանին որոշեց.**

Համայնքապետարանի 2017թ-ի ֆինանսական բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունը.

- Այլ եկամուտներ բաժնին ավելացնել 540,000 (հինգ հարյուր քառասուն հազար) դրամ, այն բաշխելով ֆոնդայի բյուջեի ծախսային մասում համաձայն հավելված 7-ի:

Ավագանու հինգ անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը

Կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Է.Խալաթյան
4. Ռ.Հարությունյան
5. Լ.Տերոյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 7
Վարդենուտ համայնքի ավագանու
27.02.2017թ. թիվ 9 որոշման
/հազար դրամով/

Բյուջեի եկամտային մաս

- Հողի հարկ-3100,0
- Գույքահարկ-1435.5

ա/ Շենքերի և շինությունների-110.0

բ/փոխադրամիջոցների-1325,5

- Տեղական տուրքեր-332.0

ա/ Ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար-132.0

բ/ Հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար-200.0

- 2017թ. Լրավճար-16062,5
- Հողի վարձավճար-600,0
- Այլ եկամուտներ-1080,0

Ընդամենը՝-22610,0

- Պահուստային ֆոնդ-1100,0
- Մնացորդ առ 01.01.2017թ. դրությամբ-1044,9

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

- Աշխատավարձ-13295,0
- Պարգևատրում-1086,0
- Բանկային գործունեություն-60,0
- Էլեկտրաէներգիայի վարձ-180,0
- Կապի ծառայություն-250,0
- Գործուղումներ-170,0
- Համակարգչային ծառայություններ-140,0
- Տեղեկատվական ծառայություններ-200,0
- Ներկայացուցչական ծախսեր-250,0
- Գրասենյակային նյութեր-280,0

- Հատուկ նպատակային նյութեր-300,0
- Դրամաշնորհներ-80,0
- Մասնագիտական ծառայություններ-80,0
- Կառավարչական ծառայություն (աուդիտ)-600,0
- Նվիրատվություն շահույթ չհետապնդող կազմակերպություններին-60,0

Ընդամենը՝ 17031,0

## ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

- Վառելիքի ծախս-950,0
- Տրանսպորտային նյութեր-815,0
- Շենքերի ընթացիկ նորոգում և պահպանում (4251)-744,0
- Մեքենա-մեխանիզմների նորոգում (4252)-250,0
- Շենքերի և շինությունների կառուցում (ջրամատակարարում)(5113)-2144,9
- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ-310,0
- Գույքի և սարքավորումների վարձակալություն(4216)-600,0
- Պարտադիր վճարներ-110,0

Ընդամենը՝ 5923,9

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Սոցիալական օգնություն 700,0

Ընդամենը 700,0

Վարդենուտ համայնքի ղեկավար՝ Սահակյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ
Վարդենուտի համայնք, հասցե գ.Վարդենուտ, հեռ. 093-66-33-45

### ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2017թ. թիվ 10 որոշում

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փոխադրամիջոցների գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 12-րդ հոդվածի 4-րդ կետով, և հաշվի առնելով Արա Արշալույսի Պետրոսյանի դիմումը.

**Վարդենուտ համայնքի ավագանին որոշում է .**

Զիջել Վարդենուտ համայնքի բնակիչ Արա Արշալույսի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Lexus rx 330 մակնիշի ավտոմեքենայի գույքահարկից 70.000 (յոթանասուն հազար) դրամ:

Ավագանու հինգ անդամներն էլ մասնակցեցին քվեարկությանը

Կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

1. Ա.Պետրոսյան
2. Ն.Սեդրակյան
3. Է.Խալաթյան
4. Ռ.Հարությունյան
5. Լ.Տերոյան

ՎԱՐԴԵՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ